

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

1(1) 2018

Երևան - 2018

Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ս. Ղազինյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Ս. Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Կ. Ա. Գևորգյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Հ. Գաբուրյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ս. Ա. Դիրբանդյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Գ. Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ Ս. Գ. Մեղրյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
Երևանի պետական
համալսարան

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025, Երևան,
Ալեք Մանուկյան 1,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ:
Հեռ.՝ 060-71-02-43

Էլ. կայք՝ publications.y-su.am
publishing.y-su.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝
համամիտ չլինելով
հեղինակների
տեսակետներին:

e-mail: law@ysu.am
Տպագրական 32.625 մամուլ:

Տպաքանակը՝ 100
Հանձնված է շարվածքի՝
15.01.2018
Հանձնված է տպագրության՝
20.04.2018

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Արթուր Վաղարշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՐԴԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐ7

Վիկտորյա Օհանյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ21

Տարոն Միմոնյան

ԻՐԱՎԱԲԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ XXI
ԴԱՐՈՒՄ. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ34

Варе Геворкян

К ВОПРОСУ О МЕХАНИЗМЕ ВЛАСТИ КАК О СТРУКТУРНОМ
ЭЛЕМЕНТЕ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ОБЩЕСТВА46

Գևորգ Դանիելյան

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ58

Վարդան Այվազյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՍԵՄԱՏԵԽՆԻԿԱՆ.....78

Անահիտ Մանասյան

ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱ-
ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ95

Ռուստամ Մախմուդյան

ԵԶՐԻՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԶՃԱՆԱԶՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ111

Հասմիկ Ենգոյան

2016 թ. Դեկտեմբերի 16-ի «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....130

Рита Арустамян	
ФУНКЦИЯ ОХРАНЫ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН И ИХ ОТВЕТСТВЕННОСТЬ ПЕРЕД ОБЩЕСТВОМ	138
Դավիթ Հակոբյան	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ.....	154
Լիպարիտ Մելիքջանյան	
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	166
Արսեն Թավադյան	
ԱՆՎԱՎԵՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	176
Ռաֆիկ Գրիգորյան	
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	189
Արա Գաբուզյան	
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ.....	203
Աննա Մարգարյան	
ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ	213
Тигран Симонян	
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ, ГОСУДАРСТВЕННО- ПРАВОВЫЕ, ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ МЕРЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ МОЛОДЕЖИ.....	234
Սամվել Դիբրանյան	
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԷԱԿԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ԲԵԿԱՆՍԱՆ ՀԻՄՔ	262

Վահե Ենգիբարյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....276

Տաթևիկ Սուջյան

ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԱՂՏՆԻ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ296

Արմեն Հովհաննիսյան

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԵՎ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԲՈՂՈՔ
ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....314

Սերգեյ Մարաբյան

ԱՆՉԱՓՈՒՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ
ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՎ ՔՐԵԱԿԱՆ
ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....326

Հրայր Ղուկասյան, Անահիտ Հարությունյան

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿԻՐԱՌՎՈՂ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.....352

Գուրգեն Ներսիսյան

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....375

Սերգեյ Մեղրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ,
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ.....395

Վահե Հովհաննիսյան	
ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	430
Վարդուշ Եսայան	
ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	445
Վահագն Դալլաքյան	
ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	458
Օլիմպիա Գեղամյան	
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	472
Տիգրան Խաչիկյան	
ԵՍՏՄ ՄԱՔՄԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՄԱՔՄԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	484
Հեղինե Գրիգորյան	
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ	496
Անի Սիմոնյան	
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	513

**ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Օլիմպիա Գեղամյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի
ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Ջրօգտագործման հարաբերությունները, հանդիսանալով յուրաքանչյուր պետության տնտեսության ու շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրամասերից մեկը, մշտապես գտնվել ու ներկայումս էլ պետության և հասարակության ուշադրության կենտրոնում են: ՀՀ Սահմանադրության՝ սեփականության երաշխավորման հողվածում սահմանված է, որ ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են¹: Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունն ու Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած մի շարք միջազգային պայմանագրերը ևս ուղղված են ջրօգտագործման ոլորտի արդյունավետության բարձրացմանն ու ջրային ռեսուրսների պահպանությանը: Իհարկե, թվարկված բոլոր իրավական ակտերը կոչված են համապատասխան գլոբալ ու լոկալ խնդիրների լուծմանը նպաստելու, դրանց հնարավորինս անխոչընդոտ կարգավորմանը, քննարկվող ոլորտում հստակ նպատակների իրագործմանը, բայց և այնպես, առանձին դեպքերում հնարավոր չէ խուսափել համապատասխան սուբյեկտների միջև ծագող վեճերի առաջացումից: Դրանք հիմնականում կապված են վերոհիշյալ ոլորտի բազմաշերտ ու խիստ ծանր հետևանքներ առաջացնող բնության հարաբերություններով, իսկ առանձին դեպքերում՝ է կոլոզիական ու տնտեսական շահերի հնարավոր կամ փաստացի բախումով:

Ի տարբերություն, օրինակ, ընդերքի հանքարդյունաբերական պաշարների, որոնք հանդիպում են ընդերքի կոնկրետ, առանձին վայրերում, կամ ի տարբերություն մթնոլորտային օդի, որը տարած-

¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

վում է Երկիր մոլորակից որոշակի հեռավորության վրա, ջրային ռեսուրսները, հսկայական մակերևույթներով տարածված են թե՛ վերգետնյա, թե՛ ստորգետնյա հաստիքներում: Հանդիսանալով շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրիչ՝ յուրաքանչյուր երկրում ջրային ռեսուրսները, կապված լինելով բնության մյուս բոլոր բաղադրիչների հետ, կամ որոշակի ազդեցություն են կրում մյուսներից, կամ իրենք կարող են լուրջ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի մյուս բաղադրատարրերի վրա: Խոսքը վերաբերում է ոչ միայն նվազ հետևանքներ առաջացնելու գործընթացներին, այլև, օրինակ, ջրերի կենսածին աղտոտմանը, որը կարող է հանգեցնել անծայրածիր ծանր հետևանքների մարդկանց կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի վրա: Դա հիմնականում կարող է առաջանալ մարդկային գործունեության հետևանքով, այսինքն՝ անթրոպոգեն ազդեցությամբ ջրավազաններում մեծ քանակությամբ կենսածին տարրերի (ազոտ, ֆոսֆոր, այլ սննդատարրեր) կուտակման հետ է կապված: Արդյունքում վատանում է ջրի որակը, նվազում է ջրային ավազանի կենսաբազմազանությունը, տեղի է ունենում ընդհուպ գենոֆոնդի կորուստ, նվազում է էկոհամակարգերի ինքնավերականգնման ընդունակությունը: Այս հսկայածավալ գործընթացները ևս կարող են լինել վեճի առարկա: Բնականաբար, բակտերիալ աղտոտված ջրերի հետ անմիջապես շփման դեպքում կարող է զարգանալ համաճարակային հիվանդությունների շարք (խոլերա, դիզենտերիա, բժավոր տիֆ և այլն): Ակնհայտ է, որ ջրօգտագործման բնագավառում թե՛ նախկինում, թե՛ ներկայումս էլ ծագել ու շարունակում են ծագել բազմաթիվ վեճեր, որոնք պարտադիր կարգով պետք է գտնեն համապատասխան լուծումներ: Ընդ որում, էլնելով յուրաքանչյուր պետության և անհատի համար ջրային ռեսուրսների կատարած գերկարևոր գործառույթից, նմանատիպ խնդիրները, առավել ևս դրանցից որոշները, պետք է հնարավորության սահմաններում լուծվեն երկարատև գործընթացներ չպահանջող կանոնակարգով: Ելնելով վերոգրյալ անհրաժեշտությունից՝ ջրօգտագործման հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերը սահմանում են համապատասխան մարմինների ստեղծման և նրանց գործունեության իրավակարգավորումները: ՀՀ ջրային օրենսգրքում¹ օգտագործվող հիմնական հաս-

¹ ՀՀՊՏ 2002.07.10/24 (199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

կացությունները վերտառությամբ 1-ին հոդվածում վեճեր լուծող հանձնաժողով հասկացությունը սահմանված է որպես Ջրի ազգային խորհրդի կազմում գործող հանձնաժողով, որը լուծում է ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը, իսկ ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները կանոնակարգող խորհուրդը ՀՀ կառավարությանն առընթեր մարմին է, որը, ըստ նույն օրենսգրքի 111-րդ հոդվածի, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների գործունեության ընթացքում ծագած վեճերը լուծող մարմին է: Նախ և առաջ անդրադառնալով վեճեր լուծող հանձնաժողովին՝ նշենք, որ ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 8-ի համաձայն՝ Ջրի ազգային խորհուրդը ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին է, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է: Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկված են ՀՀ բնապահպանության նախարարը, ՀՀ գյուղատնտեսության նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը և մի շարք այլ պետական մարմինների ներկայացուցիչներ:

Ջրի ազգային խորհրդի կազմում ստեղծվում է վեճեր լուծող հանձնաժողովը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ ջրի ազգային խորհրդի կանոնակարգն ու կազմը հաստատվել են ՀՀ վարչապետի 2002 թ. սեպտեմբերի 16-ի N532-Ն որոշմամբ¹, ապա 2017 թ. հունվարի 31-ին կրկին վարչապետի կողմից որոշում է² ընդունվել վերոհիշյալ որոշման N 2 հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ: Տեղին ենք համարում ներկայացնել, որ վերոհիշյալի հիման վրա 2002 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ վարչապետն ընդունել է N 614-Ն որոշումը՝ Վեճեր լուծող հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կա-

¹ ՀՀՊՏ 2002.09.25/41 (216), ընդունվել է 16.09.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

² ՀՀՊՏ 2017.02.03/8 (1283), ընդունվել է 31.01.2017, ուժի մեջ է մտել 04.02.2017:

նոնակարգը և կազմը հաստատելու մասին¹, որտեղ մասնավորապես նշվում է, որ հանձնաժողովն իր գործունեության ընթացքում դեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ջրային օրենսգրքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

Հիշյալ կանոնակարգով սահմանված այլ լիազորությունների շրջանակում կարևոր ենք համարում մատնանշել հետևյալը.

ա. լուծում է ջրային հարաբերություններում ծագած վեճերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որպես կողմ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը,

բ. առաջարկում է կողմերին փոխադարձ համաձայնությամբ, մինչև հանձնաժողովի կողմից վեճի լուծման մասին որոշում ընդունելը, ձեռնպահ մնալ դատական կարգով լուծելուց.....,

դ. ...անհրաժեշտության դեպքում համապատասխան մարմիններից կարող է պահանջել և ստանալ վեճի լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ...:

Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Չայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի (նախագահի բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալի) ձայնը վճռորոշ է:

Հանձնաժողովի որոշումների չկատարման դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

Հանձնաժողովի որոշումները ստորագրվում են հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Հանձնաժողովի որոշումներին դեմ քվեարկած անդամի կարծիքը կցվում է որոշմանը:

Հանձնաժողովը գործի քննությունը սկսելուց հետո տաս օրվա ընթացքում պարտավոր է ընդունել որոշում:

Կանոնակարգով բավարար հստակությամբ սահմանված են նաև Վեճեր լուծող հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամների լիազորությունները²:

¹ՀՀՊՏ 2002.11.06/47 (222), ընդունվել է 21.10.2002, ուժի մեջ է մտել 07.11.2002:

²ՀՀՊՏ 2002.11.06/47 (222), ընդունվել է 21.10.2002, ուժի մեջ է մտել 07.11.2002:

Ինչպես տեսնում ենք, համապատասխան որոշումը լիովին բովանդակում է օրենքով սահմանված՝ Վեճեր լուծող հանձնաժողովի ստեղծման և գործունեության կարգն ու պայմանները: Սակայն, պետք է նշել, որ այս մարմնի գործունեության պրակտիկայի վերլուծությունը որոշակի բարդություն է ներկայացնում այն պատճառով, որ այս մարմնի գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն որևէ պաշտոնական էջում տեղադրված չէ, ինչը արդեն իսկ հիմք է տալիս եզրակացնելու, որ կամ քննարկվող ոլորտում վեճեր չեն առաջանում, կամ համապատասխան մարմինը, մեղմ արտահայտված, ոչ կանոնավոր կերպով է իրականացնում իր գործառույթները: Կարծում ենք՝ թե՛ Ջրի ազգային խորհուրդ ստեղծելու, թե՛ Վեճեր լուծող հանձնաժողով ստեղծելու քայլն ի սկզբանե նպատակ է հետապնդել համապատասխան հարցերի կարգավորումը տանել ավելի արդյունավետ ու դինամիկ դաշտ, սակայն, ցավոք, այսօր փաստացի ունենք հետևյալ պատկերը. Ջրի ազգային խորհուրդը ձևավորվելուց հետո իրականացրել է խիստ սահմանափակ գործունեություն, որը բավարարվել է ընդամենը թվաքանակով մի քանի նիստեր գումարելու ձևով: Պետք է նշել, որ Ջրի ազգային խորհրդի վերջին նիստը գումարվել է 2012 թ., ինչը ևս մեկ անգամ հաստատում է այս ոլորտում այս կառույցի ոչ արդյունավետ գործունեության մասին: Ավելին, ինչ վերաբերում է Վեճեր լուծող հանձնաժողովին, ապա այս մարմինը երբևէ որևէ նիստ չի գումարել, ինչը ցավալիորեն ապացուցում է, որ ջրօգտագործման հետ կապված որևէ վեճ այս մարմնի կողմից չի քննարկվել ու լուծում չի ստացել: Մեր խորին համոզմամբ՝ Վեճեր լուծող հանձնաժողովը, ձևավորվելով Ջրի ազգային խորհրդի շրջանակներում, առավել մասնագիտական մոտեցում պետք է ցուցաբերի ոլորտում առաջացող խնդիրներին ու դրանց շուրջ ծագող վեճերին: Այն, համարված լինելով մասնագիտական բարձր գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներով, կարող է վեճի կողմերի համար առավել ընթեռնելի դարձնել վեճի առարկան: Առավել ևս պետք է հաշվի առնել, որ ջրօգտագործման բնագավառում վեճերը կարող են լինել ամենատարբեր բնույթի, որոնք կարող են պահանջել խորքային գիտելիքներ կոնկրետ բնագավառում: Պրակտիկայի վերլուծությունից պարզ է դառնում, որ այս բնագավառում առաջացող վեճերը կամ ընդհանրապես չեն քննարկվել, կամ խիստ եզակի դեպքերում քննարկվել են դատարանների

կողմից, ինչը ևս այնքան էլ նպատակահարմար չէ, եթե հաշվի առնենք դատարանների ծանրաբեռնվածությունն ու շատ դեպքերում, ցավոք, առանձին նեղ բնագավառի խնդիրներին դատավորների՝ ջրային հարաբերությունների ոլորտում մասնագիտական խորքային գիտելիքների լիակատար չտիրապետելու հանգամանքը: Ջրօգտագործման բնագավառի վեճերի արտադատական լուծման եղանակների հետ կապված՝ ուշադրության արժանի է նաև ՀՀ ջրային օրենսգրքի 111-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության ընթացքում ծագած վեճերը լուծվում են ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները Կանոնակարգող խորհրդի կողմից: Կանոնակարգող խորհրդում կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Ու թեև ՀՀ կառավարությունը 2002 թ. հոկտեմբերի 17-ին ընդունած N1678-Ն որոշմամբ¹ ստեղծել է ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ, հաստատվել է նրա կազմը, սակայն նախ և առաջ պետք է նշել, որ օրենքով ու որոշմամբ նախատեսված և ստորև ներկայացված գործունեության ուղղություններից որևէ մեկը նպատակաուղղված չէ վեճերի լուծմանը: Եվ պետք է ենթադրել, որ այս լիազորությունը ներառված է «օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների» շրջանակում: Ինչ վերաբերում է Կանոնակարգող խորհրդի գործունեության պրակտիկային՝ որպես ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության ընթացքում ծագող վեճերի լուծման մարմնի, ապա, ցավոք, պետք է նշել, որ այս մարմինը ևս պրակտիկայում երբևէ չի քննարկել և լուծել համապատասխան վեճեր: Այս հանգամանքն առավել ակնհայտ է դարձնում, որ ջրօգտագործման բնագավառում ծագող վեճերի լուծման ճակատագիրը ՀՀ-ում հեռու է կայացած լինելուց: Կանոնակարգող խորհրդի գործունեությունը, առավել ևս կոնկրետ վեճերի լուծման ուղղությամբ արվող քայլերի բացակայությունն ապացուցում են, որ այս մարմնի գործունեությունը ևս գնահատվում է, մեղմ ասած, ա-

¹ՀՀՊՏ 2002.11.13/48(223), ընդունվել է 17.10.2002, ուժի մեջ է մտել 14.11.2002:

նարդյունավետ: Յանկանալով անդրադառնալ նաև ջրօգտագործողների միջև ծագող հնարավոր վեճերին՝ ներկայացնենք նաև ջրօգտագործողների ընկերությունների անդամների և ընկերության անդամների ու ընկերության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության միջև ընկերության գործունեության առարկայի վերաբերյալ ծագած վեճերի քննարկման և լուծման համար ստեղծվող վեճեր լուծող հանձնաժողովները: Մասնավորապես «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների մասին» ՀՀ օրենքի¹ համաձայն՝ կոնկրետ ջրօգտագործողների ընկերությունում և կոնկրետ ջրօգտագործողների ընկերությունների միությունում ստեղծվում է վեճեր լուծող հանձնաժողով: Մասնավորապես ընկերությունների կազմակերպական կառուցվածքը նախատեսող հոդված 12-ի համաձայն՝ ընկերության ժողովն ընտրում է առնվազն 3 անդամից կազմված Վեճեր լուծող հանձնաժողով: Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների շրջանակում օրենքը սահմանում է Վեճեր լուծող հանձնաժողովի անդամներին ընտրելն ու նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը, Վեճեր լուծող հանձնաժողովի կատարած ծախսերը հաստուցելը, վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգը հաստատելը: Ընկերությանը մատակարարված ռոզգման ջրի վճարի, անդամավճարի կամ այլ վճարի պարտք ունեցող անդամները չեն կարող ընտրվել Վեճեր լուծող հանձնաժողովի կազմում: Փաստորեն Վեճեր լուծող հանձնաժողովի անդամների լիազորությունների սահմանները, գործունեության ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ, իսկ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատվող՝ Վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգով: Վեճեր լուծող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության՝ ընկերության անդամ(ներ)ի դիմումով կամ Ընկերության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության նախաձեռնությամբ: Որպես այս մարմնի գործունեության հրապարակայնությունն ապահովող երաշխիքներից մեկը՝ գործում է այն նորմը, ըստ որի՝ Վեճեր լուծող հանձնաժողովի նախագահը պարտավոր է յուրաքանչյուր ջրօգտագործողի ներկայացնել Վեճեր լուծող հանձ-

¹ՀՀՏՊ 2002.07.10/24 (199), ընդունվել է 04.06.2002, ուժի մեջ է մտել 10.10.2002:

նաժողովի կանոնակարգը, եթե վերջինս նման ցանկություն է հայտնել: Իրենց խախտված իրավունքը վերականգնելու մասին դիմումներն ընկերության անդամները գրավոր հանձնում են հանձնաժողովի նախագահին, որը տասնօրյա ժամկետում դիմումի քննարկման նպատակով հրավիրում է հանձնաժողովի նիստ: Դիմումի քննարկումը կազմակերպվում է դռնբաց, որի ժամանակ կարող են մասնակցել ընկերության յուրաքանչյուր ջրօգտագործող անդամ, տնօրինության աշխատակից կամ որևէ այլ անձ:

Վեճեր լուծող հանձնաժողովը գործը քննարկում է մեկ նիստով: Անհրաժեշտության դեպքում այն կարող է քննարկել մի քանի նիստով, սակայն ոչ ավել, քան քննարկումը սկսելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, որից հետո հանձնաժողովը կայացնում է որոշում: Կողմերը տեղեկացվում են նիստի անցկացման նպատակի, տեղի ու ժամանակի մասին և պարտավոր են մասնակցել նիստի աշխատանքներին, իսկ եթե հնարավորություն չունեն անձամբ մասնակցելու, ապա նրանց շահերը կարող են ներկայացնել այլ անձինք համապատասխան լիազորագրի առկայության դեպքում: Այն դեպքերում, երբ լավում է Վեճեր լուծող հանձնաժողովի անդամին վերաբերող վեճը, վերջինս՝ որպես հանձնաժողովի անդամ, չի մասնակցում նիստին և որոշման կայացմանը: Վեճեր լուծող հանձնաժողովի նիստի ընթացքում լավում են վեճի կողմերի փաստարկները, որոնք կարող են ներկայացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Վեճի կողմերը Վեճեր լուծող հանձնաժողովին կարող են ներկայացնել իրենց կարծիքը հիմնավորող ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը: Վեճեր լուծող հանձնաժողովը կարող է կիրառել ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կամ հաստատել համապատասխան պայմանների հիման վրա վեճի կողմերի հաշտությունը: Վեճեր լուծող հանձնաժողովը որոշում է կայացնում՝ հիմք ընդունելով վեճի կողմերի կարծիքները և հիմնավորումները: Վեճեր լուծող հանձնաժողովը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

ա. վերացնել, փոփոխել կամ թողնել առանց փոփոխության վարչական խորհրդի և (կամ) տնօրինության կողմից ընկերության անդամի նկատմամբ կայացված որոշումը,

բ. վերականգնել ընկերության անդամի խախտված իրավունքը, այդ թվում՝ պարտավորեցնել այդ իրավունքը խախտողին կատարել համապատասխան գործողություններ:

Այս մարմնի գործունեության կարևորագույն առավելություններից մի քանիսն ամփոփելով՝ նշենք, որ վեճի քննությունն ու որոշման կայացումը չեն պահանջում երկարատև ժամանակահատված, գործընթացն էլ իրականացվում է հրապարակայնության սկզբունքի առավելագույնս պահպանմամբ: Բացի վերոհիշյալներից՝ կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ ջրօգտագործողների ընկերություններում ստեղծված վեճեր լուծող հանձնաժողովները, գործելով տեղում և ավելի քաջատեղյակ լինելով իրավիճակին ու հանգամանքներին, կարող են առավելագույնս նպաստել վեճի լուծմանն ու կողմերի իրավունքների վերականգնմանը: Չնայած օրենքով և բոլոր ջրօգտագործողների ընկերությունների կանոնադրություններում նախատեսված՝ ընկերության վեճեր լուծող հանձնաժողովների դե յուրե գոյությանը՝ պետք է նշել, որ ջրօգտագործողների ընկերություններում նման մարմիններ դե ֆակտո չեն ձևավորվում, և պրակտիկայում դրանք որևէ վեճի լուծում չեն տալիս: Դրա վառ ասպացույցն են նրանց պասիվ գործունեությունը, նիստերի արձանագրությունների իսպառ բացակայությունը: Նման հանձնաժողովների բացակայությունը կամ վստահության բացակայությունը դրանց նկատմամբ փաստում է, որ ՀՀ-ում դեռևս ձևավորված չէ ջրօգտագործողների ընկերություններում կազմավորված Վեճեր լուծող հանձնաժողովների կողմից վեճերի լուծման պրակտիկա, ինչը, անկախ պատճառներից, շարունակում է մնալ որպես գերխնդիր:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք փաստել, որ ՀՀ ջրային օրենսգրքի, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի և օրենսդրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունում ջրօգտագործման հետ կապված վեճերի քննարկումն ու լուծումը վերապահված են Ջրի ազգային խորհրդի կազմում գործող Վեճեր լուծող հանձնաժողովին (ջրօգտագործման թույլտվությունների հետ կապված վեճեր), ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները Կանոնակարգող խորհրդին (ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության

ընթացքում ծագած վեճեր) և ջրօգտագործողների առանձին ընկերությունների և միությունների կազմում ձևավորված վեճեր լուծող հանձնաժողովներին (ընկերության անդամների, ընկերության անդամների և վարչական խորհրդի և (կամ) տնօրինության միջև ընկերության գործունեության առարկայի վերաբերյալ ծագած վեճեր): Ստացվում է, որ դե յուրե ստեղծված են ուլորտի վեճերի լուծման երեք հարթության մարմիններ, մինչդեռ դրանցից ոչ մեկը պրակտիկայում լուծում չի տվել որևէ վեճի:

Հիմք ընդունելով այն պարզ հանգամանքը, որ ջուրը եղել ու մնում է կյանքի ու գործունեության աղբյուր, այն յուրաքանչյուր երկրի տնտեսության ու շուկայական հարաբերությունների կարևորագույն բաղադրատարրերից է, ինչի հետ կապված վեճերը պետք է պարտադիր կարգով գտնեն խելամիտ ու արդյունավետ լուծումներ, գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել արդյունավետ պայմաններ ստեղծել ջրօգտագործողների ընկերություններում վեճեր լուծող հանձնաժողովների ձևավորման և գործունեության համար: Քննարկվող հարցի լուծման համար հնարավոր ուղղություն ենք համարում նաև հաշտարարի ինստիտուտի ներմուծումը, որը՝ որպես իրավական ինստիտուտ, որպես առավել քաղաքակիրթ ու ժամանակակից պահանջներին բավարարող կառույց, հնարավոր է, որ կոչվի հնարավորինս լիարժեք լուծելու մարդու էկոլոգիական իրավունքների ջրային բաղադրիչում ծագող վեճերը: Այս կառույցը, մեր պատկերացմամբ, պետք է ունենա անկախ կառավարման և ֆինանսավորման համակարգ, ինչը հիմնական գրավականն ու երաշխիքը կհանդիսանա ջրօգտագործողների իրավունքների պաշտպանության, վեճերի լուծման գործընթացում: Ավելին, այն լիովին կհամապատասխանի նաև ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի կոնվենցիայի պահանջներին¹, որը Կոնվենցիայի 4-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների ոչ պատշաճ իրականացման համար նախատեսում է դատարանում կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշման վերանայման հնարավորություն:

¹ https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf.

Ձևավորվելով վերջին ժամանակահատվածում՝ հաշտարարի ինստիտուտը ողջ աշխարհում իր գործունեությունն է ծավալում ամենատարբեր բնագավառներում, այդ թվում՝ ֆինանսական, աշխատանքային, առևտրային, ընտանեկան վեճերի լուծման ուղղությամբ՝ ստանձնելով կենսունակ և նախընտրելի այլընտրանքային կառույցի դեր:

Ի տարբերություն դատական գործընթացների՝ հաշտարարի գրասենյակը գործում է առավել անմիջականության սկզբունքով, վեճերի լուծումն իրականացվում է առավել փակ, որը հանրային քննարկումների առարկա չի դառնում: Ժամկետային առումով ևս հաշտարարի միջնորդությունով վեճի լուծումն իրականացվում է համեմատաբար ավելի սեղմ ժամկետում և պահանջում է ավելի քիչ ծախսեր:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ Внесудебного ПОРЯДКА РАЗРЕШЕНИЯ СПОРОВ, СВЯЗАННЫХ С ВОДОПОЛЬЗОВАНИЕМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Олимпия Гегамян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук*

Водные ресурсы являются одной из важнейших составляющих экономики и окружающей среды каждой страны. В связи с этим они всегда были и остаются в центре внимания как отдельных государств, так и международного сообщества. В свою очередь споры, возникающие в сфере водопользования, будучи связанными с существованием и функционированием человека, общества и государства, требуют особого внимания и повышения эффективности механизмов решения.

Данная научная статья посвящена изучению особенностей некоторых механизмов внесудебного разрешения споров, связанных с водопользованием. На основе изучения законодательства данной сферы нами представлены правовые нормы, регулирующие деятельность соответствующих органов. Изучение практики в данной сфере также является основой для более подробного изложения пробелов и недостатков в этой области. В данной научной статье подчерки-

вається необхідність удешевлення механізмів, застосовуваних в даній сфері.

PECULIARITIES OF EXTRAJUDICIAL DISPUTE RESOLUTION IN WATER USE CASES IN THE REPUBLIC OF ARMENIA

Olympia Geghamyan
Lecturer of the YSU Chair of Civil Procedure
Candidate of Legal Sciences

Water resources are vital elements of environment and represent a major economic factor in any country. This explains the enormous attention water resources have historically been exposed to both domestically and internationally. Accordingly, water use disputes require particular focus to improve the efficiency of dispute resolution mechanisms as they are closely linked to existential foundations of humans, societies and states.

The present article is devoted to certain features of extrajudicial dispute resolution mechanisms in water usage trial cases. Based on the analysis of the pertaining legislation an attempt has been made to present regulatory framework applicable to the relevant institutions. In addition, the analysis of the practices being applied in this field allowed us to reveal the gaps and shortcomings in legal regulation. Finally, based on the aforementioned, proposals are made aimed at improving certain mechanism in this field.

Բանալի բառեր - ջրօգտագործման հետ կապված վեճեր, Վեճեր լուծող հանձնաժողով, Ջրի ազգային խորհուրդ, Կանոնակարգող խորհուրդ

Ключевые слова: споры о водопользовании, Комиссия по разрешению споров, Национальный водный совет, Регулирующий совет

Key words: disputes in water use cases, Disputes resolution commission, National water council, Regulatory Board